

ԿԱՐԳ

<<ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
<<ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ>> ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ԴՊՐՈՑՈՒՄ ՀԵՌԱՎԱՐ (ԴԻՍՏԱՆՑԻՈՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ <<Ուսումնա-սպորտային համալիր>> հիմնարկի հանրակրթական դպրոցում (այսուհետ՝ դպրոց) հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Հեռավար (դիստանցիոն) կրթությունը կրթական ծրագրերի ուսուցման կազմակերպման համակարգված ձև է, որի շրջանակներում ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:

3. Հեռավար (դիստանցիոն) կրթությունը կարող է կիրառվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բացառիկ դեպքերում և ժամկետներով:

4. Հեռավար (դիստանցիոն) կրթություն կազմակերպելիս և իրականացնելիս <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ <<Ուսումնա-սպորտային համալիր>> հիմնարկի կողմից կրթական ծառայությունների մատուցման մասին պայմանագրով նախատեսված ծառայությունները ոչ հիմնարկի (դպրոցի) մեղքով ամբողջական (լիարժեք) չմատուցելու հետևանքով՝ չմատուցված ծառայությունների մասով վճարը (ուսման վարձը) վերահաշվարկվում է և ըստ այդմ՝ հեռավար (դիստանցիոն) կրթական ծառայությունների մատուցման դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է պայմանագրով նախատեսված ընդհանուր վճարի (ուսման վարձի) 60 (վաթսուն) տոկոսը:

5. Հեռավար (դիստանցիոն) ուսուցման մասնակիցները դպրոցի սովորողները (այսուհետ՝ սովորողներ) և ուսուցիչներն են (այսուհետ՝ նաև մասնակիցներ):

6. Հեռավար (դիստանցիոն) ուսուցմամբ իրականացվող կրթական ծրագրերի բովանդակությունը և տևողությունը որոշվում է հանրակրթական պետական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

II. ՀԵՌԱՎԱՐ (ԴԻՍՏԱՆՑԻՈՆ) ՈՒՍՈՒՑՄԱՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Հեռավար (դիստանցիոն) ուսումնական գործընթացի կազմակերպման հիմքը սովյալ դպրոցի (տարրական, հիմնական, ավագ) ուսումնական պլանն է (այդ թվում՝ առարկայական ծրագրերն ու դասացուցակը):

Դասարանում սովորողների առավելագույն թվաքանակը չի կարող գերազանցել 20-24-ը, իսկ օտար լեզուների դասավանդման դեպքում՝ 10-12-ը:

8. Հեռավար (դիստանցիոն) ուսուցման գործընթացում հնարավորինս ներգրավվում են դպրոցի նյութատեխնիկական ռեսուրսները, այդ թվում՝ թվայնացված տպագիր նյութերը, գրադարանային և առցանց ֆոնդերը, էլեկտրոնային գրքերը, էլեկտրոնային ուսումնական նյութերը, առանձին դասերի և մարզումների տեսաձայնագրությունները և այլն:

9. Սովորողների հեռավար (դիստանցիոն) ուսուցումը կազմակերպելու նպատակով դպրոցը կարող է ներդնել ուսուցման կառավարման էլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն է տալիս ուսուցիչներին մեկ տեղում վերբեռնել ուսումնական նյութերն ու հանձնարարությունները՝ աշակերտների կողմից հեշտությամբ դրանք ներբեռնելու հնարավորությամբ: Ուսուցման էլեկտրոնային համակարգը կարող է հագեցած լինել նաև սովորողներին գնահատելու, համապատասխան մեկնաբանություններ թողնելու գործիքներով, որոնք հասանելի են նաև ծնողներին:

Էլեկտրոնային համակարգը ապահովում է սովորող-ուսուցիչ-ծնող ուղիղ կապը և այն հագեցած է անվճար հասանելի բջջային հավելվածով:

10. Հեռավար (դիստանցիոն) ուսուցման արդյունավետ կազմակերպման նպատակով դպրոցն իրականացնում է ուսուցիչների և համապատասխան այլ աշխատողների մասնագիտական գիտելիքների անհրաժեշտ որակի ապահովման միջոցառումներ:

11. Սովորողների համար դպրոցում բացվում է անհատական էջ՝ համապատասխան ծածկագրով:

12. Դպրոցում հեռավար (դիստանցիոն) եղանակով դասապատրաստումը իրականացվում է հետևյալ եղանակով.

1) տարրական դպրոցում դասապատրաստումը կազմակերպվում է 4-5 սովորողների տարբերակված խմբերով, ընդ որում՝ դասապատրաստմանը մասնակցում են նաև առարկայական ուսուցիչները՝ բացատրելով երեխաներին հանձնարարությունները և պարզաբանելով անհասկանալի հարցերը.

2) հիմնական և ավագ դպրոցում սովորողների դասապատրաստման ընթացքում նախապես որոշված ժամերին ըստ անհրաժեշտության ուսուցիչները տալիս են համապատասխան պարզաբանումներ:

13. Դասերի ժամանակացույցը և տևողությունը կազմվում է նախօրոք՝ նպատակ ունենալով իրականացնել հնարավոր բոլոր դասերը և պարապմունքները:

14. Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացիկ հարցերը կարգավորվում են դպրոցի պատասխանատուների կողմից:

15. Հեռավար (դիստանցիոն) ուսուցման ընթացքում վարվում է սովորողների հաճախումների մատյան և կատարվում է գիտելիքների գնահատում:

III. ՀԵՌԱՎԱՐ (ԴԻՍՏԱՆՑԻՈՆ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Հեռավար (դիստանցիոն) ուսուցման կազմակերպման և իրականացման ընթացքում մասնակիցները ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կարգով նախատեսված իրավունքներ և պարտականություններ:

17. Հեռավար (դիստանցիոն) ուսուցման կազմակերպման և իրականացման ընթացքում ուսուցիչը իրավունք ունի կիրառել էլեկտրոնային ուսուցման առկա միջոցները (հնարավորությունները) և իրականացնել հսկողություն ուսումնառության ընթացքի և տրված հանձնարարականների կատարման նկատմամբ:

18. Հեռավար (դիստանցիոն) ուսուցման կազմակերպման ընթացքում ուսուցիչը պարտավոր է՝

1) նախապատրաստվել հեռավար դասին նախօրոք՝ ունենալով դասի պլան,

2) դասի պլանավորման ժամանակ պահպանել ուսուցման հետևյալ սկզբունքները՝ գիտականություն, համապատասխան նյութի ընկալման ապահովում, ուսուցման մատչելիություն, պարզից բարդը անցում, տեսողական-լսողական նյութերի ապահովում, համակարգվածություն և հաջորդականություն, սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններին համապատասխանություն, ուսուցման կայունություն և շարունակականություն,

3) ժամանակացույցով սահմանված համապատասխան ժամին միանալ դասին և ժամանակին ավարտել դասը,

4) սովորողին ապահովել դասերի և հանձնարարությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ նյութերով,

5) առավել մանրամասն բացատրել դասը և հանձնարարությունները՝ էկրանին զուգահեռ կիրառելով հնարավորինս շատ պատկերազարդ նյութեր,

6) կիրառել առցանց գործիքներ, որոնք կապահովեն դասին սովորողների առավելագույն ներգրավվածությունը,

7) հեռավար (դիստանցիոն) ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով առկա հնարավորությունների շրջանակում սովորողներին տրամադրել առցանց ռեսուրսներ, մասնավորապես՝ թվայնացված նյութեր, էլեկտրոնային գրքեր, անհրաժեշտության դեպքում՝ տրամադրել կամ կիրառել նաև տեսաձայնագրություններ,

8) դասերը վարել տեսախցիկը միացրած,

9) հետևել սովորողների ներկայությանը դասերին, բացակայությունների դեպքում՝ տեղյակ պահել դասղեկին,

10) անհրաժեշտության դեպքում կապ հաստատել և համագործակցել ծնողի հետ:

19. Հեռավար ուսուցման կազմակերպման ընթացքում սովորողը պարտավոր է՝

1) նախապատրաստվել և ժամանակին միանալ դասերին,

2) դասին միանալուց առաջ պատրաստել բոլոր անհրաժեշտ պարագաները՝ դասագիրք, տետր, գրիչ և այլ նյութեր,

3) ներկա գտնվել դասի ամբողջ ընթացքում և ցուցաբերել ակտիվ մասնակցություն,

4) որևիցե պատճառով դասին չմիանալու դեպքում նախապես տեղեկացնել ուսուցչին, ինչպես նաև հետագայում ուսուցչից տեղեկանալ հանձնարարությունների մասին և կապ պահպանել նրա հետ,

5) անհասկանալի հարցերի դեպքում դիմել ուսուցչին,

6) Ժամանակին կատարել տրված հանձնարարությունները և կատարված առաջադրանքները սահմանված ձևաչափով ու ժամկետներում տրամադրել ուսուցչին,

7) պահպանել կարգուկանոն, չաղմկել և չխանգարել դասը,

8) տեսախցիկը պահել միացրած, իսկ բարձրախոսը միացնել միայն անհրաժեշտության դեպքում: